

ան դժբաղդ ըլլա: Չէ, Սահակ, պէտք չէ, որ քոյրս դժբաղդ ըլլա:

Սահակ. Թող ըլլա... Թող ըլլա երջանիկ (կը, բղկի ու ղըսպի ջանալով կ'ուզէ դուրս)

Նուարդ. (Յուզուած ու կենտրոնացած) Չէ, չէ...

Սահակ. Թող ըլլա երջանիկ: (Տխուր ու խորունկ) Մնաս-բարով, Նուարդ: (Չերմ կը թօթուէ ձեռքը ու դուրս)

Նուարդ. (Ապշած ու յուզուած կը նայի ետեւէն):

Լեւոն Շանթ

(Վերջը յաջորդ համարում)

ՀԻՒԱՆԴԻ ՄԱՐԴԸ *)

(Բ. Շահրեխ)

Դ.

Թիւրքիական ցենզուրան.

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻԻՆ

Չափազանց կըթուլին—Թիւրքիական լրագիրները—Յենգուրական դէպքերի նմուշներ—Ուղղած Աստուածաշունչը—Սրբազրուած Ղուրանը. Գիժ կովը—Քաղաքականութիւնը մամուլի մէջ:

Ինչպիսի կըթուլին, ինչպիսի յառաջադիմութիւն:

Այդպէս էի ես կարծում, երբ տեսնում էի շոգենաւի վրայ նստած արիստոկրատ թիւրքերին, որոնք զնում էին դէպի վիլլանները և Մարմարա ծովի ամարանոցները և ճանապարհի

*) Տես «Մուրճ» № 10.

երկարութիւնը չզգալու համար եւրոպական լրագրների ընթերցանութեամբ էին զբաղուած:

Ձափազանց կրթութիւն, չափազանց յառաջադիմութիւն, կարծում էին ընդհակառակը թիւրքական լրտեսները և եւրոպական լրագրներ կարդացողներին ամբաստնում էին իբրև երիտասարդ թիւրքերի:

Եւ զարմանալի չէ այն հանգամանքը, որ թիւրքիական կառավարութիւնը կատարելապէս գնահատում է այդ օրինակ ամբաստանութիւնները, որովհետեւ նրա պաշտպան ոստիկանութիւնը այնպիսի անհատների, իբրև երիտասարդ թիւրքերի, կալանաւորեց, որոնք horrible dietu ոճրագործութիւն են արել նրանով, ու իրանց ֆէսերի վրայ օղանցքներ են ունեցել:

Օղանցքները երիտասարդ թիւրքերի նշաններն են, ասում է ոստիկանութիւնը...

Եւ իհարկէ այդ օրուանից ի վեր գրեթէ ամեն մի թիւրք իր ֆէսի վրայ օղանցքներ չունի, կամ թէ չէ բացի Կ. Պոլսի գրաքննիչի ատենանից անցկացած թիւրքիական լրագրից ուրիշ լրագիր չէ կարդում հրապարակօրէն:

Եւ իսկապէս Կ. Պոլսի ոչ մի լրագիր չէ կարող իր ընթերցողի մտքերը լարել կամ փոխել:

Եւ միթէ կարելի է մի բան աշխարհիս երեսին աւելի տափաղ, չոր ու ցամաք և ձանձրալի երեակայել, քան թէ այդ Կ. Պոլսի լրագրներն են ներկայացնում:

Թիւրքիական թերթերի ամենազուարճալի մասը կազմում են նրանց պաշտօնական բաժինը և այն սկզնակները, որտեղ գլխաւորապէս երևում են թիւրքական ցենզուրայի լարախաղացութեան բնորոշ նմուշները:

Թիւրքիայում գրաքննութիւնը զարմանալի կեանք է վարում: Թիւրքիական թերթերը զրկուած են նոյն իսկ ամենաչինչին ազատութիւնից ներքին կամ արտաքին քաղաքականութեան մասին անկախ կերպով իրանց կարծիքները արտայայտելու: Դրանք մեծ մասամբ գրաքննութիւնից ներշնչուած յօդուածներով են կերակրում իրանց ընթերցողներին:

Շատ անգամ էլ պատահում է, որ թիւրքիական ցենզուրան շատ բան թոյլ է տալիս տպագրելու թիւրքիական լեզուով լոյս տեսնող թերթերում, այն ինչ միևնոյն բանը արգելւում է մայրաքաղաքում լոյս տեսնող միւս թերթերում երևալու, որպէսզի դրանով արգելի միայն թիւրքերի համար որոշած տեղեկութիւնները աւելի լայն շրջաններում տարածուելու:

Թիւրքերի համար լուրերը առհասարակ ուրիշ գոյն ունեն, եւրոպացիների համար ուրիշ:

Մի բանի մէջ միայն բոլորը միեւնոյն իրաւունքն ունեն, որ է լուսթիւնը: Միանգամայն անհաւատալի է թիւրքերական ցենզուրի նրբազգացութիւնը և դիտկրեալ լինելը:

Ահա միայն մի բանի պերճախօս փաստեր:

Երբ Կարնօն սպանուել էր, լուրը կայծակի արագութեամբ բերանացի կերպով տարածուեց և չնայած նրան, որ իւրաքանչիւրը այդ մասին արդէն գիտէր և խօսում էր, Կ. Պոլսի թերթերին արգելուած ֆիաց այդ սարսափելի դէպքի առթիւ ամենազնշին մանրամասնութիւնը անգամ յիշատակելու:

«Յրանսիական հասարակապետութեան նախագահը հանկարծամահ եղաւ» այսպէս հաղորդուեց փարիզեան լուրը: Յետոյ կարողացան, իհարկէ, նրա մահուան մասին մի բանի բան ևս պատմելու, բայց միայն այս ձևով:

«Կարնօն դէպքից յետոյ գիտակցութիւնը կորցրեց և կառքում պառկեց: Սրան յետևող նախադասութիւնը «Նրա բերանից վազում էր արիւն» գրաքննիչի փափուկ զգացմունքները շարժեցին»:

Պրեֆեկտ Րիվօի խօսքերը ուղղուած թատրոնական հիւրերին Լիօնում, թէ «մի բղաւք Կարնօն զոհ եղաւ մի ատենատաութի», ստիպուած էին այս ձևով հաղորդելու:

«Մի բղաւք Կարնօն մահամերձ է...»

Այս բոլորի հետ, սակայն, Եւրոպական թերթերը բացարձակ կերպով կախուած էին, կատարուած ոճրագործութեան վերաբերեալ իրանց մանրամասն տեղեկութիւններով, բոլոր հիւրանոցներում և սրճարաններում:

Մի իրեկոյ մի հեռագիր կարդացի ես հետեւալ բովանդակութեամբ:

«Պետական բոլոր բարձր աստիճանաւորները շտապեցին Հոլմբերտ թագաւորին իրանց համակրութիւնները արտայայտելու»:

Մի քանի օրից յետոյ, սակայն, կարդացի ես Եւրոպական թերթերում Ակիւարիտօյի կատարած անյաջող ատենատաութի մասին:

Մի ուրիշ անգամ հաղորդում էր Մադրիդից. «Իսպանիայի ամբողջ ազգաբնակչութիւնը խորապէս յուզուած է մինիստր նախագահ Կանօլայի մահուան առթիւ»: Բայց ես իսկոյն հասկացայ թէ այդ ինչ է նշանակում:

Ստամբուլովի սպանման ժամանակ արգելուած էր նրա ոչ միայն մահուան, այլ և նոյն իսկ նրա ծանր և անյուսալի հիւանդութեան մասին որեւէ բան խօսելու, որից յետոյ մահը քնականաբար պիտի տեղի ունենար:

Մամուլային սոյն օրինակ կատակերկութիւններ տեղի ունեցան Յունաստանի Գէորգ Թագաւորի կեանքի դէմ սպանման փորձ անելու առիթով. նոյնը պատահեց և Աւստրո-Ունգարիայի Եղիսաբէթ կայսրուհուն, Իտալիայի Հումբերտ Թագաւորի և Միացեալ Նահանգների Նախագահ Մակ-Կինլէի սպանուելու առիթով:

Հայկական խռովութիւնների ժամանակ պատահած ցենզուրական ծիծաղաշարժ նմուշների մասին խօսելը մեզ շատ հեռու կտանէր:

Թուրքիկ կերպով աւելորդ չէ այստեղ յիշել, որ Թիւրքիական Թերթերում արգելուած էր Գլատատոնի պատկերը հրատարակելու, որովհետեւ պետական այդ անձնաւորութիւնը թոյլ էր տուել իրան Սուլթանի և Թիւրքական բացասական ըէժիմի դէմ խօսելու: Բացի դրանից նաև արգելուեց, Թիւրքիական լրագրներում որևէ բան յիշելու այն շոգեհաւի կաթսայի պայթելու մասին, որ Թիւրքական կառավարութիւնը շինել էր տուել Գերմանիայի Քիլ քաղաքում. չէ որ Թիւրք ընթերցողները կարող էին այդ կաթսայի պայթելը ուրիշ ենթադրութիւններով պարզաբանել:

Հայկական կոտորածներից յետոյ Թիւրքիական ցենզուրան սկսեց իր բարբարոս արշաւանքները հայերէն լեզուով լոյս տեսած գրքերի և պարբերական հրատարակութիւնների վերաբերմամբ. նա եռանդուն կերպով խուզարկում և մրտում էր հայերէն լեզուով այն բոլոր հրատարակութիւնները, որոնց մէջ, աչք զարնող շատ նախադասութիւններ կային:

Նոյն իսկ Աստուածաշունչը ազատ չմնաց վերոյիշեալ արշաւանքներից: Թիւրքական գրաքննիչի աչքում նրա մի քանի նախադասութիւնները անվստահելի և կասկածելի դարձան:

Հրէաստանը նման է հնչում Հայաստան բառին, բայց որովհետեւ Թիւրքիայի համար Հայաստան բառը դոյութիւն չունի, քերուած է բոլոր քարտէշների վրայից, դրա համար էլ արգելեցին յաւիտեանս Հայաստան բառի գործածութիւնը, որովհետեւ նա կարող է յիշեցնել նախկին Հայաստանը:

Ուրեմն այսուհետեւ այնպիսի Աստուածաշունչներ, որոնց մէջ չի կարելի գտնել Հրէաստան բառը:

Միւս տեղը վերաբերում է Քրիստոսի համար առաջին անգամ մեռնող սուրբ Ստեփանոսին: Թիւրքական գրաքննիչը չկարողացաւ ներել այդ սուրբին, նա չէ, որ քարկոծուելով մեռաւ որը կարող է 1896 թ. Օդոսսոսեան դէպքերը յիշեցնել, երբ այնչափ հայեր նոյն ձևով սպանուեցան, ուստի և այդ կտորը ջնջուեց:

Նոյեմբեր, 1905.

Մի ցենզուրա, որ կարողանում է Ղուրանից «Քալիֆայի պարտականութիւնների մասին» գլուխը ջնջել, ի հարկէ կարող է և Աստուածաշունչը սրբագրել:

Թիւրքական լրագրները իրանց խորամանկութեամբ ստիպուած են երբեմն իրանց միտքը տպագրական սխալների շնորհիւ արտայայտել: Երբ Սուլթանի առաջին քարտուղար Սուրէա փաշան յանկարծակի մեռել էր և լուր էր տարածուել, որ նա թունաւորուել է, Կ. Պոլսի գերմաներէն լեզուով հրատարակուող մի թերթում տպուած էր հետեւեալը... Սուրէա փաշան յանկարծաժահ եղաւ մի թիւրքական (türkisch) հիւանդութեան շնորհիւ, փոխանակ ասելու խարդախ (tückisch) հիւանդութիւնից...:

Երբ յայտնի ծովային մինիստր Հասան փաշան մի թանգազին պատուոյ սուր ստացաւ, Ֆրանսիական մի թերթ դիտմամբ հետեւեալը տպեց. «sabre de grande valeur» (փոխանակ valeur)...

Այդպիսի տպագրական սխալները պատճառ դարձան վերջապէս ցենզուրական մի հրովարտակի հրատարակութեան, որի համաձայն խմբագիրները տպագրական սխալների համար անգամ պատասխանատու են դառնում:

Դրան հակառակ, ցենզուրան ոչ միայն թոյլ է տալիս, այլ և ցանկանում է, մանաւանդ քաղաքական յուզմունքների ժամանակ, որ ընթերցողների ուշադրութիւնը գրաւուի հետեւալ լուրերով:

«Սարսափելի պտղաբերութիւն». Կոնիայում տեղի ունեցաւ կանացի պտղաբերութեան մի արտասովոր դէպք: Մի կին այդ քաղաքում ծնել է մինչև այսօր 24 երեխայ, Նա ամուսնացել է 12 տարեկան հասակում և այժմ չնայելով որ նա 49 տարեկան է սակայն 25 տարեկանի տպաւորութիւն է թողնում: Այդ 24 երեխաներից կենդանի են մնացել միայն 9 հոգի, այն ինչ մնացածները մեռել են իրանց փոքր հասակում, մեծ մասամբ ծնունդուց անմիջապէս յետոյ»:

«Մի գիժ կով». երբ Սըվաղում սկսուեցին հայկական առաջին շարժումները, Կ. Պոլսի թերթերից մէկը իր այնտեղի թղթակցից ստացաւ հետեւեալը. «Առանձին մի բան չկայ հաղորդելու. նորերս մաքսատան պաշտօնեաները ձերբակալեցին ծխախոտի մի քանի մաքսանենգների. իբրև մի ծիծաղաշարժ պատմութիւն աւելորդ չեմ համարում նաև ձեզ յայտնել, որ քաղաքում մի կով է գժուել, որի պատճառով տեղիս ամբողջ ազգաբնակչութիւնը յուզուած դրութեան մէջ է գտնւում»: Շատ պարզ է, որ ընթերցողը պէտք է կարողանայ այդ խօսքերը տողերի արանքներով կարդալ:

Յոճնական պատերազմից սկսած Թիւրքիայի պարբերական մամուլը աչքի ընկնող փոփոխութեան ենթարկուեց, որովհետեւ միայն այդ ժամանակ Թիւրքական թերթերը առաջին անգամ արտօնութիւն ստացան օգտուելու քաղաքական յայտարարութիւններէ կամ կոմբինացիաներից: Այդ ժամանակ մանաւանդ մի՝ օրաթերթ՝ պատկերազարդ ամենօրեայ «Մալիւմատ»ը, որ Ելլըզլի օրգանն է համարուում, արտաքին քաղաքականութեան իր նուիրած գեղեցիկ և ազատ յօդուածներով, գրաւեց ընթերցողները ուշադրութիւնը: Այդտեղ անգլիացիներին էլ անուժ էին նոյն յանդիմանութիւնները՝ Հընդկաստանի մահմեդականների վերաբերմամբ, նրանց կատարած անգթութիւնների համար, ինչ որ անգլիացիները Թիւրքիային էին ուղղում հայերի նկատմամբ և պահանջում էր, որ «յանուն քաղաքակրթութեան խօսող պետութիւնները» յանուն քաղաքակրթութեան Հնդկաստանի ճշդուած մահմեդականներին ազատեն:

Պետութիւնը թոյլ էր տալիս Կ. Պօլսի թերթերի միջոցով մանաւորապէս, Թիւրքերի համար ասհասարակ, այնպիսի լուրեր տարածել, որոնք դուրսը միայն ծիծաղ կարող են շարժել:

Այսպէս օրինակի համար «Սաբահ»-ը հաղորդում է. «Ադմիրալները խնդրեցին Զեւադ փաշային կրետական գործը իր ձեռքը վերցնել և շուտափոյթ լուծում տալ»:

Սակաւն սրան հակառակ, ժողովուրդը արդէն սովորած էր քաղաքականութեան մասին խօսելու և դատողութիւններ տալու. շատերը արդէն սկսել էին եւրոպական լրագրներ կարդալ իրանց ծանօթութիւնները ընդարձակելու համար, շաւերն էլ մեծ հետաքրքրութեամբ յետևում էին ներքին քաղաքականութեան:

Բայց յանկարծ Թնդաց ցենզուրայի «յետը», ինքվիզիցիայի որոտաբառը. և ամեն ինչ ընկղմւում էին ֆանատիկոսութեան մէջ ահով ու սարսափով:

Նոյն իսկ դուրսը ապահովութեան մէջ ապրող երիտասարդ Թիւրքերը սրերը պատեանների մէջ՝ դնելով և թափ տալով իրանցից բոլոր իդէալները, վերադարձան Փադիշահի ոսկու ամանների շուրջը բոլորելու:

Ի վերջոյ յիշատակեմ և հետեւալդէպքը, որ կարող է ապացուցանել թէ ցենզուրան որչափ լրջութեամբ է տանում իր գործը:

Մի դիշեր Պերայի գլխաւոր փողոցում զբօսնում էին երկու գերմանացի սլարոններ իրանց տիկիւնների հետ միասին,

երբ մի շատ ճաշակով հագնուած թիւրք վրայ է դալիս և սկսում վերոյիշեալ չորս հոգուն մտրակահարել: Սակայն 'մօտեկայ սըր-
ճարանից մի քանի մարդիկ վրայ հասնելով, հասցնում են սրի-
կային իր արժանի վարձատրութիւնը մի փառաւոր ըթակով:
Ոստիկանութիւնը այս դէպքի ժամանակ ներկայ չէր: «Levant
Herald» լրագիրը դէպքը հաղորդելով աւելացնում է:

«Զի կարելի ասել թէ մեր ոստիկանութիւնը լաւ կազմա-
կերպուած չէ: Ամեն յիսուն քայլի ամենայն ճշտութեամբ ա-
գնաններ են նշանակուած, որոնք ցերեկները միշտ իրանց ծա-
ռայութեան մէջ են, սակայն գիշերները երբեմն վատ եղանակ-
ներին ու հանգիստ ժամանակներին սրճարանների մէջ խաղաղ
անկիւն են որոնում, որից և ինչպէս ներկայ պատմութիւնը ցոյց է
տալիս ոստիկանութիւնը յաճախ տուժում է:

Զնայած զգուշութեամբ գործածուած այս բառերին «Levant
Herald» ցենզուրայից իսկոյն մի խիստ յանդիմանութիւն ստա-
ցաւ: Յանդիմանութեան պատճէնը բերում եմ այստեղ թիւր-
քիական մամուլի բիւրօյի ծիծաղելի վիճակը ապագային որպէս
յիշողութիւն թողնելու:

Դ Ո Ւ Ն

Ներքին գործոց մինիստրութիւն. Օտարազգի մամուլի
վարչութիւն. 28 յուլիսի 1896

«Levant Herald» ոչ մի ուշադրութիւն չի դարձնում ցեն-
զուրական կանոնադրութեան վրայ, ուստի և յայտարարում է
նրան, որ նա կենթարկուի այն պատիժներին, որոնք նշանակ-
ուած են ցենզուրական կանոնադրութեան նկատմամբ զանցա-
ւութիւն անողների համար:

Պետական խորհրդական և վերատեսուչ օտարազգի մամուլի:

Նշան.

Սպանացի պատիժները կայանում են նախ դրամական
օժանդակութիւնից զրկելու. (Բոլոր թերթերը թիւրքերայում
տէրութիւնից դրամական օժանդակութիւն են ստանում) և
դադարեցման մէջ, որ լինում է օրով, շաբաթով, ամսով և կամ
ընդ միշտ: Վերջինս ամենածանր պատիժն է արդէն, որին են-
թարկուեց և ի միջի այլոց հայոց «Հայրենիք» լրագիրը: Այդ
առթիւ թիւրքիական ցենզուրայի խորհրդաւոր պատճառաբա-
նութիւնը հետեւեալն էր. «Ի նկատի ունենալով խմբագրութեան
ընթացքը»...

Դեր. Թարգ. Լևոն Բաքայեան